ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«05» 12 2023թ.
No 01/0833

«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Գ. Վարդանյան փ. 1Ա)

Հարգելի՛ պարոն Բադալյան,

Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) վերապահված՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը պատշաճ իրականացնելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից արդյունահանված, արտադրված, ձեռքբերված, իրացված, սեփական կարիքների համար օգտագործված շինարարական ավազի և շինարարական խճի բոլոր տեսակների ու դրանց համար հումք հանդիսացող ավազի, մանրացված ավազի, խճի, բազալտի ավազի, բազալտի հանքաքարի, ավազակոպճային խառնուրդի, և այլնի շրջանառության վերաբերյալ՝ ամսական կտրվածքով՝ համաձայն կից ներկայացված ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Միաժամանակ բոլոր տեսակի շինարարական ավազների և շինարարական խճերի ու դրանց յուրաքանչյուր տեսակի հումքի իրացման կամ ձեռքբերման ծավալների մասին տեղեկատվության մեջ անհրաժեշտ է ներկայացնել առաջին տասը խոշոր գնորդներին և

մատակարարներին առաձին տողերով, իսկ մյուս մատակարարների և գնորդների ծավալները միասին՝ մեկ տողով: Ընդ որում բոլոր տեսակի շինարարական ավազների և շինարարական խճերի ու դրանց յուրաքանչյուր տեսակի հումքի՝ ավազի, մանրացված ավազի, խճի, բազալտի ավազի, բազալտի հանքաքարի, ավազակոպճային խառնուրդի և այլնի շրջանառության վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտ է լրացնել առանձին ձևանմուշներով՝ յուրաքանչյուր ձևանմուշի վրա լրացնելով շինարարական ավազի, շինարարական խճի կամ համապատասխան հումքի անվանումը,

2. 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շինարարական ավազի և շինարարական խճի բոլոր տեսակների ու դրանց համար հումք հանդիսացող ավազի, մանրացված ավազի, խճի, բազալտի ավազի, բազալտի հանքաքարի, ավազակոպճային խառնուրդի և այլնի ձեռքբերումը, արտադրությունը, արդյունահանումը հիմնավորող բոլոր փաստաթղթերի և այլ ապացույցների՝ ներառյալ հանքի լիցենզիայի պատճենները:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդող օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ, իսկ Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող

տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

7. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

8. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «1» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մրցակցության վերահսկողության վարչություն
Կատարող՝ Ասպրուր Միքայելյան
Հեռ. (+374 60) 830-840 (216)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 12 հունվարի 2024 թվական:

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ավազի շրջանառության բնագավառում իրականացրած գործունեության վերաբերյալ

Կազմակերպության անվանումը _____

Իրավաբանական հասցեն _____

Գործունեության հասցեն(երը) _____

Պաշարների ինքնարժեքի հաշվարկման մեթոդը (ԱՄԱԵ, ՎՄԱԵ, միջին կշռված արժեք) _____

ՀՎՀՀ _____

Հեռախոս _____

Պաշտոնական էլ. փոստ _____

Հեռախոս _____

Հումքի/նյութի/արտադրանքի անվանում*

Ժամանակահատված**	*Մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին*		*Արդյունահանման ծավալ*		*ՀՀ տարածքում այլ տնտեսվարող սուբյեկտներից հաշվառու ժամանակահատվածում ձեռքբերում*			*Հաշվետու ժամանակահատվածում սեփական արտադրության ծավալ*		*Օգտագործվել է որպես հումք սեփական արտադրությունում կամ սեփական կարիքների համար (այդ թվում պայմանագրային պարտավորությունների կատարման դեպքերը)*				*Կորուստներ*		*ՀՀ-ում իրացումը*				*Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ*	
										Օգտագործվել է որպես հումք սեփական արտադրությունում կամ սեփական կարիքների համար		Այլ նպատակների համար (ներառյալ փչացումից կորուստները)										
	Բնեղեն	Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով)	Բնեղեն	Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով սպահեսում)	Մատակարարի անվանում՝ լրացնել առաջին խոշոր 10 մատակարարների անվանումները առանձին տողերով	Ձեռքբերման ծավալ /բնեղեն/	Ձեռքբերման արժեք ՀՀ դրամ (փաստացի ձեռքբերման գնով առանց ԱԱՀ)	Բնեղեն	Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով)	Բնեղեն	Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով)	Բնեղեն	Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով)	Բնեղեն	*Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով)*	Գնորդի անվանում՝ լրացնել առաջին խոշոր 10 գնորդների անվանումները առանձին տողերով	Իրացման ծավալ /բնեղեն/	Իրացման արժեք ՀՀ դրամ (ինքնարժեքով)	Իրացման արժեք ՀՀ դրամ (փաստացի իրացման գնով առանց ԱԱՀ)	Բնեղեն	Արժեքային ՀՀ դրամ (ինքնարժեքով)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
2021 հունվար																					
2021 փետրվար																					
2021 մարտ																					
2021 ապրիլ																					
2021 մայիս																					
2021 հունիս																					
2021 հուլիս																					
2021 օգոստոս																					
2021 սեպտեմբեր																					
2021 հոկտեմբեր																					
2021 նոյեմբեր																					
2021 դեկտեմբեր																					
2022 հունվար																					
2022 փետրվար																					
2022 մարտ																					
2022 ապրիլ																					
2022 մայիս																					
2022 հունիս																					
2022 հուլիս																					
2022 օգոստոս																					
2022 սեպտեմբեր																					
2022 հոկտեմբեր																					
2022 նոյեմբեր																					
2022 դեկտեմբեր																					

*Յուրաքանչյուր հումքի/նյութի/արտադրանքի համար անհրաժեշտ է լրացնել առանձին ձևանմուշ:

**Եթե միևնույն ամսվա ընթացքում հումք/նյութ/արտադրանք ձեռք է բերվել մեկից ավելի մատակարարից կամ իրացվել է մեկից ավելի գնորդների, ապա այդ դեպքում լրացնել առանձին տողով:

1. Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել mikayelyan.asatur@competition.am և info@competition.am էլ. հասցեներով:

2. Տեղեկանքի յուրաքանչյուր էջ անհրաժեշտ է վավերացնել կազմակերպության կնիքով:

Ասատուր Միքայելյան, հեռ. (060) 830 840 (216):

Կազմակերպության տնօրեն՝ _____

Կ. Տ.